

## Տ Ե Ղ Ե Կ Ա Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

### ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի քարտուղարության կողմից 2017 թվականի առաջին կիսամյակում կատարած աշխատանքների վերաբերյալ

Մարզպետը օրենսդրությամբ իրեն վերապահված լիազորությունների շրջանակում ապահովվել է ՀՀ օրենքների, Հանրապետության Նախագահի հրամանագրերի, կարգադրությունների, ՀՀ Կառավարության և վարչապետի որոշումների, ինչպես նաև այլ նորմատիվ իրավական ակտերի կատարումը: 2017 թվականի առաջին կիսամյակում մարզպետի կողմից ընդունվել են 52 որոշումներ, 73 կարգադրություններ, աշխատակազմի ղեկավարի կողմից արձակվել են 98 հրամաններ. հրավիրվել է մարզխորհրդի 1 նիստ:

2017 թվականի հունիսի 30-ի դրությամբ աշխատակազմի քարտուղարության ընդհանուր բաժնում մուտքագրվել են 3784 և ելք են արվել 4646 փաստաթղթեր:

Մարզպետը համագործակցված աշխատանքներ է տարել հանրապետական գործադիր իշխանության մարմինների տարածքային ծառայությունների հետ:

*2017 թվականի առաջին կիսամյակում ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի և ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմերում մարզպետարանի հաստիքացուցակում ընդգրկված գլխավոր, առաջատար պաշտոններ զբաղեցնող քաղաքացիական ծառայողների արեստավորումներ ու մրցույթներ չեն անցկացվել:*

Մարզպետարանի աշխատակազմում 2017թ հունիսի 30-ի դրությամբ թափուր է աշխատակազմի ծրագրերի և վերլուծության բաժնի առաջատար մասնագետի պաշտոնը , ժամանակավոր թափուր է աշխատակազմի ընտանիքի հիմնահարցերի բաժնի առաջատար պաշտոնի հաստիքը:

Սահմանված կարգով իրականացվեցին աշխատակազմի քաղաքացիական ծառայողների վերապարտսրման կազմակերպման աշխատանքները, ըստ որի գրաֆիկով նախատեսված փարբեր ժամանակահատվածներում երշարաթվա մասնագիտական վերապարտսրում են անցան աշխատակազմի թվով 8 քաղաքացիական ծառայողներ:

Մարզպետարանի աշխատակազմը մեծ ուշադրություն է դարձնում քաղաքացիների ընդունելության կազմակերպմանը և վերջիններիս կողմից ներկայացված դիմումների, բողոքների և առաջարկությունների քննարկմանը, սահմանված կարգով դրանց ուսումնասիրմանը: 2017 թվականի առաջին կիսամյակում մարզպետի մոտ կատարվել է 767 քաղաքացիների ընդունելություն:

Կիսամյակի ընթացքում ստացվել և ՀՀ Նախագահի ու կառավարության աշխատակազմից ՀՀ Վայոց ձորի մարզպետին են վերահասցեագրվել 16

դիմումներ, որից՝ 2-ը ստացվել են Զերմուկի, 6-ը Վայքի, 8-ը Եղեգնաձորի տարածաշրջանից: 2017 թվականի առաջին կիսամյակում 641 քաղաքացու դրամական օգնություն է տրամադրվել, 21 հաշմանդամներ ստացել են առողջարանային վերականգնողական ուղեգրեր, իսկ 17-ը պեպայաքվերի շրջանակներում ստացել են համապատասխան բուժօգնություն: Մեր ամենօրյա ուշադրության կենտրոնում են գտնվել նաև քաղաքացիներին հուզող սոցիալ-տնտեսական, կենցաղային, գյուղ տեխնիկա և անասուններ ձեռք բերելու, աշխատանքային, համայնքների խնդիրներին լուծում տալու հարցերը:

**2017թ.առաջին կիսամյակի ընթացքում ՀՀ Վայոց ձորի մարզպետին են դիմել 783 քաղաքացիներ, որից՝**

1. Դրամական օգնություն	641
2. Նպաստի հարցերով	6
3. Հողային վեճեր և սահմանների ճշտում	9
4. Խմելու և ոռոգման ջրի բարելավման հարցերով	8
5. Տան և շինությունների վերականգնման և վթարայնության	17
6. Աշխատանքի տեղավորման	11
7. ՏԻ մարմիններից բողոքներ և գյուղի հիմնահարցեր	5
8. Առողջարանային ուղեգրեր տրամադրելու	21
9. Պետ.պատվերով բուժօգնություն	17
10. Որդեգրման/երեխային մանկատնից վերադարձնելու/ և ներառական կրթության մեջ ընդգրկելու հարցերով	15
11. Կրթության և ՆՈՒՀ-երի հարցերով	12
12. Այլ հարցերով	21

Աշխատակազմի քարտուղարության պետ՝

Հ. Կարապետյան